ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ,

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊԱՐՈՆ ԱՐՏԱԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻՆ

ԴԻՄՈՒՄ

Դիմումատու

Ֆիզիկական անձի անուն, ազգանունը կամ իրավաբանական անձի անվանումը (լիազորված անձի անուն, ազգանունը) «Իրավունքը Եվրոպայում Ընկերակցություն» ՀԿ նախագահ՝ Լուսինե Հակոբյան

Գործունեության հասցե ք. Երևան, Բաղրամյանի պ. 10/2, բն. 4
Հեռախոսահամար(ներ) (010)-500-665, (099) 588-576
Էլեկտրոնային փոստի հասցե(ներ) europeinlaw@gmail.com

Դիմումի առարկան

Ներկայացնելով սույն դիմումը՝ հայտնում եմ, որ ցանկանում եմ ընդգրկվել ՀՀ արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում: Այդ կապակցությամբ սույն դիմումին կից ներկայացվում է՝

□ Կանոնադրություն,

□ Համապատասխան ոլորտում մասնագիտական փորձառության առկայությունը հավաստող փաստաթղթեր,

□ Ոլորտին առնչվող հրապարակումներ,

□ Միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության պայմանագրեր,
□ Նախարարության կողմից ձևավորված աշխատանքային խմբերի և հանձնաժողովների աշխատաքներին մասնակցությունը հիմնավորող փաստաթղթեր,

□ Կազմակերպության կողմից լիազորված անձ լինելու փաստը հաստատող փաստաթուղթ: Հավաստում եմ, որ տվյալ պահին չեմ ստանում ֆինանսավորում և դրամաշնորհ ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

Դիմող՝

25.04.2019թ

14362-19
25 04 19

ԵՎՐՈՊԱ
EUROPE IN
LAW

Հասցե՝ Հայաստան, Երևան, 0002,
Փ. Բուզանդի 101, բն.4
Հեռ.՝ +37410 500 665, +37499 588576
Էլ. հասցե՝ europeinlaw@gmail.com

Current address: Buzand Street 101,
apt. 4, Yerevan, 0002, Armenia
Tel.: +37410 500 665, +37499 588576
E-mail: europeinlaw@gmail.com

25.04.2019 թ.

Հարգելի պրն. Զեյնալյան,

Սույնով ՀՀ արդարադատության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու մասին «Իրավունքի Եվրոպա միավորում» (այսուհետ՝ նաև ԻԵՄ) ՀԿ-ի դիմումին կից ներկայացնում ենք հիշյալ խորհրդում ընդգրկվելու համար նախատեսված պայմաններին՝ ԻԵՄ-ի բավարարելը հաստատող տեղեկություններ, հղումներ և փաստաթղթեր:

1. Ի հաստատումն այն հանգամանքի, որ ունենք արդարադատության նախարարության իրավասության ոլորտում առնվազն 2 տարվա մասնագիտական փորձառություն (իրականացրել կամ մասնակցել ենք ոլորտին առնչվող ծրագրերի)՝ հայտնում ենք հետևյալը.

   2014թ. ի վեր «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ նաև՝ ԻԵՄ)(www.ela.am) մշտադիտարկում է դատավորների թեկնածուների և դատավորների, այդ թվում՝ ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորներիընտրության գործընթացը: Մշտադիտարկման արդյունքներով հանդես է եկել զեկույցներով (Տես ԻԵՄ-ի կայքի «Թեմատիկ զեկույցներ» բաժինը): 2017թ. ի վեր ԻԵՄ-ը դիտարկում է ՀՀ փաստաբանների պալատի մարմինների ընտրության գործընթացները: ԻԵՄ-ը միակ կազմակերպությունն է եղել Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների հասարակական կազմակերպություններից, որը 2014-2015թթ. դիտարկել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Հայաստանի դատավորի երեք թեկնածուների ընտրության գործընթացը (Տես ԻԵՄ-ի կայքի «Թեմատիկ զեկույցներ» բաժինը): Այս մրցույթների դիտարկման արդյունքում ԻԵՄ-ը մի շարք հայցեր է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ վիճարկելով կազմակերպվող մրցույթների մասին տեղեկատվություն տրամադրելուց պետական մարմինների հրաժարումը: ԻԵՄ-ի այս գործունեության մասին կարող եք ավելի մանրամասն ծանոթանալ՝ այցելելով ԻԵՄ-ի կայքի «Դատաիրավական բարեփոխումներ» բաժինը (https://bit.ly/2ZtfO25) և «Թեմատիկ զեկույցներ» ենթաբաժինը (https://bit.ly/2KYhgX3)

2. Ի հավաստումն այն փաստի, որ «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ն մասնակցել է փորձագիտական աշխատանքների իրականացմանը հայտնում ենք, որ.

   2012թ. ԻԵՄ-ի փորձագետները կազմել են վերլուծություն ազգային դատարանների կողմից խոսքի ազատության իրավունքի ոլորտում Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայով ձևավորված ստանդարտների կիրառման վերաբերյալ (Տես ԻԵՄ-ի կայքի «Թեմատիկ զեկույցներ» ենթաբաժինը):

   2012թ. նախաձեռնել է մի շարք հկ-ների կողմից աշխատանքային խումբ ընտրական օրենսգրքի փոփոխությունների մշակման նպատակով, ինչի արդյունքում ԱԺ-ին են ներկայացվել ԸՕ-ի փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ:

   2016թ. ԻԵՄ-ի փորձագետները ներգրավված են եղել ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխությունների աշխատանքներում՝ մասնակցելով 4+4+4 ձևաչափով բանակցություններին իշխանական, ոչ իշխանական ուժերի և քաղհասարակության ներկայացուցիչների միջև: Այդ ձևաչափի վերացումից հետո էլ ԻԵՄ-ը շարունակել է խորհրդատվություն տրամադրել ոչ

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎՐՈՊԱ
EUROPE IN LAW

Հասցե՝ Հայաստան, Երևան, 0002,
Փ. Բուզանդի 101, բն.4
Հեռ.՝ +37410 500 665, +37499 588576
Էլ. հասցե՝ europeinlaw@gmail.com

Current address: Buzand Street 101,
apt. 4, Yerevan, 0002, Armenia
Tel.: +37410 500 665, +37499 588576
E-mail: europeinlaw@gmail.com

իշխանական ուժերին ԸՕ-ի փոփոխությունների շուրջ ընթացող բանակցություններում, ինչի արդյունքում լուրջ փոփոխության է ենթարկվել ՀՀ ընտրական օրենսգիրքը: Մասնավորապես՝ վերացվել է ընտրողների ստորագրված ցուցակները հրապարակելու արգելքը: Այս մասին ավելի մանրամասն տես ԻԵՄ-ի կայքի «Ընտրություններ և հանրաքվե» ենթաբաժինը (https://bit.ly/2PuLQGp) և «Հայտարարություններ» ենթաբաժինը (https://bit.ly/2L0uxym):

Տես նաև Ազատություն ռադիոկայանի նյութերը 4+4+4 ձևաչափով բանակցությունների վերաբերյալ (https://www.youtube.com/watch?v=IlO4MiAHNmI):

2017թ. ապրիլի 2-ի ազգային ժողովի ընտրությունների դիտարկման արդյունքում մշակվել են ընտրական օրենսդրության փոփոխությունների առաջարկներ (Տես ԻԵՄ-ի կայքի «Թեմատիկ զեկույցներ» ենթաբաժինը):

Տարբեր ոլորտներում ՀՀ օրենսդրության փորձագիտական վերլուծություններ են կատարվել ՀՀ Սահմանադրության երաշխավորման տեսանկյունից, որոնց արդյունքում կազմվել են անհատական դիմումներ ՀՀ Սահմանադրական դատարան, որոնց քննության արդյունքում դրանցով բարձրացված սահմանադրականության հետ կապված հարցերով Սահմանադրական դատարանը տարբեր օրինադրույթներ սահմանադրությանը հակասող և անվավեր է ճանաչել:

3. Ի հաստատումն այն հանգամանքի, որ ունենք ոլորտին առնչվող հրապարակումներ, հայտնում ենք, որ.

   Ոլորտին առնչվող հիմնական հրապարակումներին կարելի է ծանոթանալ ԻԵՄ-ի կայքի «Թեմատիկ զեկույցներ» ենթաբաժնում (https://bit.ly/2KYhgX3): Այստեղ զետեղված են ԻԵՄ-ի 2014-2015թթ ազգային դատարանների դատավորների թեկնածուների ընտրության գործընթացների, 2015թ. սահմանադրական հանրաքվեի և 2017թ. ԱԺ և Երևանի ավագանու ընտրությունների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի թեկնածուների ընտրության մրցույթների, 2018թ. Սահմանադրական դատարանի դատավորի ընտրության գործընթացի դիտարկման արդյունքներն ամփոփող զեկույցները:

4. Ի հաստատումն այն հանգամանքի, որ ոլորտին առնչվող հարցերով համագործակցել ենք միջազգային կազմակերպությունների հետ, կից ներկայացնում ենք պայմանագրեր Ժողովրդավարության ազգային հիմնադրամի, Հայաստանում Եվրամիության պատվիրակության և ԵԱՀԿ-ի հետ:

5. Դիմել ենք ներգրավվելու ՀՀ ԱՆ-ի դատաիրավական բարեփոխումների մշակման աշխատանքային խմբում/հանձնաժողովում:

6. Գտնում ենք, որ մեր բավական մեծ փորձագիտական ներուժը մեզ թույլ կտա արդյունավետ մասնակցություն ունենալ ՀՀ արդարադատության նախարարությանը կից հասարակական խորհրդի գործունեությանը մի շարք ոլորտներում մեր փորձագիտական ներդրումն ունենալու, ինչպես նաև նախարարության գործունեությունն արդյունավետորեն մշտադիտարկելու միջոցով:

Հարգանքով՝

Լուսինե Հակոբյան

Տպագրված է ընդամենը 2 օրինակ
ՕՐԻՆԱԿ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎՐՈՊԱ ՄԻԱՎՈՐՈՒՄ»
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԵՐԹ
ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ

«16» 11 2016թ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ՝

_________ ԼՈՒՍԻՆԵ ՀԱԿՈԲՅԱՆ

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ
«31 » 01. 2011թ.
Գրանցման համար 211.171.05588
Վկայական 03Ա 090657
ՀՎՀՀ 00104899

31.01.2011թ. գրանցված կանոնադրության
Թիվ 001-2 փոփոխությունը գրանցված է ՀՀ
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի կողմից 30.06.2014թ.

30.06.2014թ. գրանցված կանոնադրության
թիվ 002-2 փոփոխությունը
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
ԿՈՂՄԻՑ

« » __________ 2016թ.

ՀՀ [illegible] ռեգիստրի [illegible]ակալության

[illegible] Դավթյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎՐՈՊԱ ՄԻԱՎՈՐՈՒՄ»

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Նոր խմբագրություն

2016թ.

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎՐՈՊԱ ՄԻԱՎՈՐՈՒՄ»
ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետև՝ կազմակերպություն) իր անդամների շահերի ընդհանրության հիման վրա հոգևոր և ոչ նյութական այլ պահանջմունքներ բավարարելու նպատակով ստեղծված հասարակական միավորման տեսակ է:

1.2. Կազմակերպության անվանումն է.
հայերեն՝ « «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպություն, կրճատ՝ Իրավունքի Եվրոպա միավորում ԻՀԿ կամ Իրավունքի Եվրոպա միավորում ՀԿ, հապավումը՝ ԻԵՄ,

1.3. Կազմակերպությունը գործում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ միջազգային պայմանագրերին, ՀՀ օրենսդրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

1.4. Կազմակերպության գործունեությունը հիմնված է օրինականության, հրապարակայնության, կամավոր անդամության, անդամների իրավահավասարության, ինքնակառավարման և կոլեգիալ ղեկավարման սկզբունքների վրա:

1.5. Կազմակերպությունը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Այն կարող է գործել օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգով:

1.6. Կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում ՀՀ արդարադատության նախարարության կողմից պետական գրանցում ստանալու պահից:

1.7. Կազմակերպությունը կարող է ունենալ խորհրդանիշ:

1.8. Կազմակերպությունը կարող է ունենալ միջազգային կապեր, անդամակցել միջազգային և օտարերկրյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների, կնքել պայմանագրեր և համաձայնագրեր նրանց հետ:

1.9. Կազմակերպությունը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, կարող է հիմնել լրատվության միջոցներ, տեղեկատվություն տարածել իր գործունեության վերաբերյալ՝ զանգվածային լրատվության միջոցներով:

1.10. Կազմակերպության գտվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, 0002, քաղաք Երևան, Փավստոս Բուզանդի 101, բնակարան 4, հեռախոս՝ (010) 500-665:

1.11. Կազմակերպության պաշտոնական կայք էջն է www.ela.am -ը (Կազմակերպությունը կայքն օգտագործում է օգտագործման իրավունքով):

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Կազմակերպության գործունեությունը նպատակաուղղված է իրավունքի և կրթության միջոցով եվրոպական ընտանիքը միավորող արժեքների՝ մարդկային արժանապատվության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ժողովրդավարության, իրավական պետության կայացմանը, տարածմանն ու ամրապնդմանը եվրոպական ընտանիքի անդամ պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում:

2.2 Կազմակերպության հիմնական նպատակներն են՝ օրենքով սահմանված կարգով.

2.2.1 գործուն դերակատարություն ունենալ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված և եվրոպական ընտանիքի առաջադեմ պետությունների համար համընդհանուր հռչակված արժեքների տարածման գործում՝ համընդհանուր չափանիշների մշակման և դրանց ներդրման միջոցով,

2.2.2 աջակցել Եվրոպայում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, այնպիսի իրավական մշակույթի ձևավորմանը, որտեղ մարդկային արժանապատվությունը բարձրագույն արժեք է, և որտեղ հարգվում և պաշտպանվում են մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները,

2.2.3 աջակցել եվրոպական ընտանիքի պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, իրավունքի գերակայության հաստատմանը և ժողովրդավարության կայացմանը,

2.2.4 գործուն մասնակցություն ունենալ միջազգային ասպարեզում իրավունքի Եվրոպայի կայացմանը հետամուտ միջազգային և օտարերկրյա կազմակերպությունների գործունեությանը եվրոպական ընտանիքի անդամ պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում,

2.2.5 նպաստել ազգային օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի կատարելագործմանը, Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատաիրավական բարեփոխումների անցկացմանը, ինչպես նաև դրանց մոտարկմանը համաեվրոպական չափանիշներին,

2.2.6 նպաստել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և նրանց պաշտոնատար անձանց, ինչպես նաև բնակչության իրավագիտակցության և իրավական մշակույթի մակարդակի բարձրացմանը՝ մասնագիտական դասընթացների անցկացման, խորհրդաժողովների կազմակերպման, հետազոտությունների, իրականացման, գիտական աշխատանքների հրապարակման և տեղեկատվության տարածման միջոցով,

2.2.7 շփումներ և համագործակցություն հաստատել հայ և օտարերկրյա իրավաբանների, կրթական հաստատությունների, հասարակական և այլ կազմակերպությունների, իրավապաշտպանների միջև՝ նպաստելու եվրոպական ընտանիքի անդամ պետություններում համընդհանուր հռչակված արժեքների արմատավորմանը,

2.2.8 իր գործունեությամբ նպաստել քաղաքացիական հասարակության կայացմանն ու հզորացմանը,

2.2.9 իր գործունեության առարկան կազմող հարցերի շուրջ իրավաբանական և այլ խորհրդատվություն տրամադրել ֆիզիկական և իրավաբանական անձանց :

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Կազմակերպությունն օգտվում է ՀՀ օրենսդրությամբ իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքներից, այդ թվում՝

3.1.1 ունի առանձին գույք, ինքնուրույն հաշվեկշիռ, իր անունով կնիք հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, հաշվարկային և այլ հաշիվներ բանկում՝ թե ՀՀ և թե արտարժույթով,

3.1.2 իր անունից կարող է ձեռք բերել գույքային և ոչ գույքային իրավունքներ և կրել պարտականություններ, հանդես գալ որպես հայցվոր և պատասխանող դատարանում,

3.1.3 ինքնուրույն որոշել իր կազմակերպական կառուցվածքը, խնդիրները, նպատակները և գործունեության ձևերը,

3.1.4 տեղեկատվություն տարածել իր գործունեության մասին,

3.1.5 կազմակերպել և անցկացնել հավաքներ,

3.1.6 ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել ու պաշտպանել իր և իր անդամների իրավունքները և օրինական շահերն այլ կազմակերպություններում, դատարանում, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում,

3.1.7 համագործակցել ոչ առևտրային այլ կազմակերպությունների, այդ թվում՝ միջազգային և օտարերկյա ոչ կառավարական ոչ առևտրային կազմակերպությունների հետ, ինչպես նաև համակարգված գործունեություն ծավալելու, ընդհանուր շահեր ներկայացնելու և պաշտպանելու նպատակով՝ այդ կազմակերպությունների հետ ստեղծել միություններ կամ անդամակցել նրանց ստեղծած միություններին՝ պահպանելով իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի կարգավիճակը,

3.1.8 իր կանոնադրությամբ սահմանված կարգով ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր և ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ,

3.1.9 ստեղծել առևտրային կազմակերպություններ կամ մասնակից դառնալ այդպիսի կազմակերպություններին:

3.2 Կազմակերպությունը կրում է համապատասխան պարտականություններ, այդ թվում՝

3.2.1. վարել իր անդամների հաշվառումը,

3.2.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով վարել գործավարություն և հաշվապահական հաշվառում,

3.2.3. իր գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները ներկայացնել կազմակերպության վեհաժողովի հաստատմանը ոչ պակաս, քան երկու տարին մեկ անգամ,

3.2.4. ցանկացած ֆիզիկական անձի պահանջով՝ ողջամիտ ժամկետում նրան հնարավորություն տալ ծանոթանալու կազմակերպության կանոնադրությանը,

3.2.5. Հայաստանի Հանրապետության արդարադատության բնագավառի պետական կառավարման լիազորված մարմնի պատճառաբանված պահանջով ողջամիտ ժամկետում նրան տրամադրել կազմակերպության բարձրագույն և մյուս մարմինների որոշումների պատճենները, կազմակերպության գործունեության մասին այլ փաստաթղթեր, թույլատրել այդ մարմնի ներկայացուցիչներին ներկա գտնվելու կազմակերպության վեհաժողովին:

3.2.6. առանձնացված ստորաբաժանում ստեղծելու և կազմալուծելու մասին որոշումներ ընդունելուց հետո, մեկամսյա ժամկետում, դիմել պետական գրանցման մարմին՝ սահմանված կարգով դրանք հաշվառելու և հաշվառումից հանելու համար:

3.2.1 . Անօրինական գործունեություն ծավալելու համար կազմակերպությունն ու նրա պաշտոնատար անձինք կրում են օրենքով նախատեսված պատասխանատվություն:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԴԱՄԱԳՐՎԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ԿԱՐԳԸ

4.1. Կազմակերպության անդամ կարող է դառնալ 18 տարին լրացած յուրաքանչյուր իրավաբան կամ մարդու իրավունքներով հետաքրքրվող կամ բարձր իրավագիտակից ցանկացած անձ, որը դրսևորում է քաղաքացիական ակտիվություն և ընդունում է սույն կանոնադրությունը, իր գործունեությամբ նպաստում է կազմակերպության կանոնադրական նպատակների իրագործմանը և մուծում մուտքավճար, եթե սահմանված է:

4.2. Կազմակերպության անդամ դառնալ ցանկացող անձը կազմակերպության նախագահին է ներկայացնում գրավոր դիմում, ինքնակենսագրական, մոտիվացիոն նամակ և կազմակերպության 2 անդամի կողմից տրված գրավոր երաշխավորագիր՝ մուծելով մուտքավճար, որի չափը և վճարման կարգը սահմանվում է խորհրդի, իսկ եթե խորհուրդ ձևավորված չէ, ապա վեհաժողովի կողմից:

4.3. Կազմակերպության անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի կամ խորհրդի՝ տվյալ անդամին կազմակերպության անդամությունից հեռացնելու մասին որոշման հիման վրա՝ սույն կանոնադրությամբ կամ կազմակերպության հետ կնքված իր աշխատանքային պայմանագրերով սահմանված պարտականությունների խախտման կամ իր վրա Կազմակերպության կառավարման մարմինների կողմից դրված այլ լիազորությունների և պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կամ անբարեխիղճ կատարման համար, կամ կարգապահական կանոնները խախտելու համար:

4.4. Կազմակերպության անդամները մուծում են անդամավճար, որի չափն ու վճարման կարգը սահմանվում է կազմակերպության խորհրդի (դրա

առկայության պարագայում), իսկ եթե խորհուրդ ձևավորված չէ, ապա վեհաժողովի կողմից:

4.5. Կազմակերպության հիմնադիրները համարվում են կազմակերպության անդամներ:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Կազմակերպության անդամն իրավունք ունի՝

5.1.1. ընտրել և ընտրվել կազմակերպության ղեկավար մարմիններում,

5.1.2. կազմակերպության գործունեության և ծրագրերի բարելավման նպատակով կազմակերպության ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել առաջարկություններ, դիտողություններ, գործնական ծրագրեր,

5.1.3. օգտվել կազմակերպության իրավական, ֆինանսական, տեխնիկական, տեղեկատվական և այլ աջակցությունից բացառապես Կազմակերպության նպատակների և խնդիրների լուծման համար կամ Կազմակերպության հետ կնքված աշխատանքային պայմանագրով կամ օրենսդրությամբ կամ կանոնադրությամբ սահմանված կամ Կազմակերպության ղեկավար մարմինների կողմից պատշաճ կարգով իր վրա դրված պարտականությունները կատարելու համար,

5.1.4. Կազմակերպության ղեկավար մարմիններից սպառիչ տեղեկատվություն ստանալ կազմակերպության գործունեության մասին,

5.1.5. մասնակցել կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառումներին,

5.1.6. կազմակերպության մարմինների որոշումները բողոքարկել գրավոր կարգով՝ ըստ վերադասության, ինչպես նաև դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում,

5.1.7. անարգել դուրս գալ կազմակերպության շարքերից:

5.2. Կազմակերպության անդամը պարտավոր է:

5.2.1. մասնակցել և աջակցել կազմակերպության գործունեությանը,

5.2.2. կատարել Կազմակերպության կանոնադրության պահանջները և ղեկավար մարմինների որոշումները և պահպանել Կազմակերպության կարգապահական կանոնները,

5.2.3. իր գործունեությամբ և վարքով նպաստել կազմակերպության հեղինակության բարձրացմանը,

5.2.4. մղվել մուտքավճար և/կամ անդամավճարմ, եթե սահմանված են:

5.3. Կազմակերպության վեհաժողովը կամ խորհուրդը կազմակերպության անդամների նկատմամբ կարող է կիրառել խրախուսանքի միջոցներ: Օրենքի և/կամ Կանոնադրության դրույթների և/կամ կարգապահական կանոնների խախտում թույլ տված անդամի նկատմամբ կազմակերպության վեհաժողովի կամ խորհրդի կողմից կարող են կիրառվել տույժի միջոցներ (նախատեսվում են Կազմակերպության կարգապահական կանոններով) ընդհուպ մինչև կազմակերպության անդամությունից հեռացնելը:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Կազմակերպության ղեկավար մարմիններն են խորհուրդը և/կամ նախագահը:

6.2. Կազմակերպության բարձրագույն ղեկավար մարմինը վեհաժողովն է, որին պատկանում է կազմակերպության գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման կամ ղեկավար մարմինների որոշումների վերանայման իրավունքը:

6.3. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է բացառապես կազմակերպության վեհաժողովը:

6.4. Բացի վեհաժողովից, կազմակերպության, մնացած ղեկավար մարմիններն ընտրվի են և գործում են առավելագույնը երկու տարի ժամկետով: Դրանցում առաջադրվել և ընտրվել կարող է կազմակերպության յուրաքանչյուր անդամ:

6.5. Կազմակերպության հերթական վեհաժողովը գումարվում է երկու տարին մեկ անգամ՝ խորհրդի կամ նախագահի կողմից, հրավիրողի սահմանած կարգով և ժամկետներում: Կազմակերպության վեհաժողովը կարող է լինել հերթական կամ արտահերթ:

6.6. Կազմակերպության հերթական վեհաժողովը հրավիրվում է նախագահի կողմից դրա մասնակիցների համատեղ հավաքի ձևով կամ հեռակա կարգով՝ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ՝ կամ փոխանակելով փաստաթղթեր, որոնք հնարավորություն են տալիս ճշգրիտ որոշել, որ փաստաթուղթը ելնում է նրանում որպես հեղինակ նշված անձից: Կազմակերպության հերթական վեհաժողովի օրակարգի, նրա աշխատանքն

սկսվելու տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն պատվիրված նամակով կամ հեռահաղորդակցության միջոցների օգտագործմամբ կամ այլ եղանակով օրենքով չարգելված եղանակով ձեռք բերելով ապացույցներ պատշաճ ծանուցման փաստի վերաբերյալ՝ օգտագործելով տեխնիկական միջոցներ՝ տեսաձայնագրող, ձայնագրող, ֆոտո, բազմացնող կամ այլ սարքավորումներ: Կազմակերպության հերթական վեհաժողովի վերաբերյալ մասնակիցների ծանուցումը պետք է ապահովվի ոչ ուշ, քան ժողովի անցկացման օրվանից 14 օր առաջ: Արտահերթ վեհաժողով կարող է գումարվել կազմակերպության անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի պատճառաբանված որոշման դեպքում ոչ ուշ, քան 14 օրացուցային օրվա ընթացքում: Արտահերթ վեհաժողովի օրակարգի, անցկացման տեղի, օրվա ու ժամի մասին մասնակիցները պետք է ծանուցվեն հերթական վեհաժողովի հրավիրման համար նախատեսված եղանակով, սակայն ոչ ուշ, քան այդ վեհաժողովի անցկացման օրվանից 3 օր առաջ:Արտահերթ վեհաժողովները գումարվում են նախաձեռնողի օրակարգով, սակայն որը կարող է փոփոխվել վեհաժողովի ընթացքում:

6.7. Կազմակերպության վեհաժողովը.

6.7.1. հաստատում է կազմակերպության կանոնադրությունը, կատարում է փոփոխություններ դրանում և (կամ) հաստատում է նոր կանոնադրությունը,

6.7.2. կազմակերպության խորհուրդ ձևավորելու դեպքում որոշում է կազմակերպության խորհրդի անդամների թիվը, ընտրում է խորհրդի անդամներին, փոփոխում է խորհրդի կազմը, վաղաժամկետ դադարեցնում է խորհրդի անդամների լիազորությունները: Կազմակերպության խորհուրդ չձևավորելու պարագայում Օրենքով կամ սույն կանոնադրությամբ նախատեսված խորհրդի լիազորություններն իրականացնում է վեհաժողովը,

6.7.3. ընտրում է կազմակերպության նախագահ, փոխնախագահ և պատասխանատու քարտուղար՝ երկու տարի ժամկետով: Վաղաժամկետ դադարեցնում է նրանց լիազորությունները: Կազմակերպության նախագահն ի պաշտոնե հանդիսանում է կազմակերպության խորհրդի նախագահը,

6.7.4. քննարկում և հաստատում է կազմակերպության խորհրդի և/կամ նախագահի հաշվետվությունները, հաստատում է կազմակերպության գործունեության և գույքի օգտագործման հաշվետվությունները,

6.7.5. ընդունում է կազմակերպության վերակազմակերպման և լուծարման մասին որոշումները, հաստատում է կազմակերպության փոխանցման ակտը կամ

բաժանիչ հաշվեկշիռը, բացառությամբ դատարանի վճռով վերակազմակերպումից և լուծարումից,

6.7.6. Վեհաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե դրան մասնակցում են կազմակերպության բոլոր անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են կազմակերպության բոլոր անդամների ձայների պարզ մեծամասնությամբ,

6.7.7. Կազմակերպության վեհաժողովի, ղեկավար մարմինների որոշումները, որոնք ընդունվել են օրենքի, Կազմակերպության կանոնադրության կամ ղեկավար մարմինների որոշումներով սահմանված կարգի խախտմամբ, կամ ոտնահարել են կազմակերպության կամ նրա անդամների իրավունքներն ու օրինական շահերը, կարող են դատական կարգով անվավեր ճանաչվել կազմակերպության անդամի դիմումի հիման վրա: Նման դիմում կարող է տրվել 60 օրվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ կազմակերպության անդամն իմացել է կամ պարտավոր էր իմանալ այդպիսի որոշման ընդունման մասին, եթե օրենքով այլ բան նախատեսված չէ:

6.8. Կազմակերպության խորհուրդը.

6.8.1. Կազմակերպության խորհուրդը կարող է ընտրվել վեհաժողովի կողմից երկու տարի ժամկետով:

6.8.2. համարվում է կազմակերպության ղեկավար մարմինը կազմակերպության վեհաժողովների միջև ընկած ժամանակահատվածում,

6.8.3. քննարկում և որոշումներ է կայացնում կազմակերպության գործունեությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք մտնում են կազմակերպության վեհաժողովի և նախագահի իրավասությունների մեջ,

6.8.4. նախապատրաստում է կազմակերպության վեհաժողովները, առաջարկություններ է ներկայացնում վեհաժողովին նրա իրավասությանը վերաբերող հարցերի վերաբերյալ,

6.8.5. որոշումներ է ընդունում կազմակերպության առանձնացված ստորաբաժանումներ՝ մասնաճյուղեր, ներկայացուցչություններ, ինչպես նաև հիմնարկներ, հանձնաժողովներ, աշխատանքային խմբեր ստեղծելու և լուծարելու մասին, հաստատում է դրանց կանոնադրությունները, կանոնակարգերը և աշխատակարգերը, որոնք չեն կարող հակասել սույն կանոնադրությանը, նշանակում և ազատում է նրանց ղեկավարներին,

ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին տալիս է լիազորագրեր,

6.8.6. ստեղծում է առևտրային կազմակերպություններ կամ մասնակից դառնում այդպիսի կազմակերպությունների,

6.8.7. շնորհում է անդամություն կամ դադարեցնում է անդամությունը բացառությամբ այն անդամների, որոնց ընտրել է վեհաժողովը, կազմակերպության անդամների նկատմամբ կիրառում խրախուսանքի և տույժի միջոցներ (նախատեսվում են Կազմակերպության կարգապահական կանոններով),

6.8.8. սահմանում է կազմակերպության անդամների կողմից անդամավճարների մուծման կարգը, չափերը և ձևերը,

6.8.9. տնօրինում է կազմակերպության գույքը, որոշում է կազմակերպության ղեկավար մարմինների վարձատրության կարգն ու չափը.

6.8.10. Խորհուրդը կարող է հարցեր քննարկել և որոշումներ ընդունել, եթե դրան մասնակցում են խորհրդի բոլոր անդամների երկու երրորդը (2/3): Հարցերի քննարկման ժամանակ որոշումներն ընդունվում են խորհրդի անդամների ձայների երկու երրորդով (2/3): Ձայների հավասարության դեպքում նախագահի ձայնը վճռորոշ է,

6.8.11. Խորհուրդն իր հերթական նիստերը հրավիրում է վեց ամիսը մեկ անգամ: Խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել խորհրդի անդամների թվի առնվազն 1/3-ի գրավոր պահանջով ոչ ուշ, քան 7 (յոթ) օրացուցային օրվա ընթացքում՝ կազմակերպության նախագահի կողմից, կամ կազմակերպության նախագահի կողմից անմիջականորեն:

6.9. Կազմակերպության նախագահը.

6.9.1. Կազմակերպության նախագահն ընտրվում է վեհաժողովի կողմից երկու տարի ժամկետով:

6.9.2. ղեկավարում է կազմակերպության խորհրդի աշխատանքները և հանդիսանում է կազմակերպության ղեկավար մարմինը կազմակերպության խորհրդի և/կամ վեհաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում, իրականացնում է կազմակերպության ընթացիկ ֆինանսական գործունեությունը,

6.9.3. ապահովում է կազմակերպության վեհաժողովի, կազմակերպության խորհրդի կողմից ընդունված որոշումների և հանձնարարականների կատարումը, իր իրավասությունների սահմաններում ընդունում է

որոշումներ և ստորագրում հրամաններ, կարգադրություններ ու այլ անհրաժեշտ փաստաթղթեր,

6.9.4. հաստատում է կազմակերպության աշխատակազմի հաստիքացուցակը, դրույքաչափերը և կազմակերպության աշխատակազմի կանոնակարգը, որը չի կարող հակասել սույն կանոնադրությանը,

6.9.5. աշխատանքի է ընդունում և ազատում է աշխատանքից կազմակերպության աշխատակազմի հաստիքային և պայմանագրային աշխատողներին,

6.9.6. կազմակերպության վեհաժողովին հաշվետվություն է ներկայացնում կազմակերպության խորհրդի և/կամ իր գործունեության մասին,

6.9.7. որոշումներ է կայացնում կազմակերպության բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ կազմակերպության վեհաժողովի և խորհրդի իրավասությանը վերապահված հարցերից,

6.9.8. կազմակերպության անունից գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր, բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային, ընթացիկ և այլ հաշիվներ, կազմակերպության անունից վարում է բանակցություններ, կնքում պայմանագրեր և համաձայնագրեր, ստորագրում կազմակերպության վեհաժողովի և խորհրդի կողմից ընդունված փաստաթղթերը,

6.9.9. նախագահում է կազմակերպության վեհաժողովի և/կամ խորհրդի նիստերը, կարող է լիազորել կազմակերպության վեհաժողովի և խորհրդի նիստերի նախագահումը կազմակերպության այլ անդամի ում թեկնածությունը կարժանանա նիստին մասնակցող անդամների մեծամասնության հավանությանը, հրավիրում և գումարում է կազմակերպության վեհաժողովի և/կամ խորհրդի հերթական և արտահերթ նիստեր,

6.9.10. կազմակերպության փոխնախագահին, պատասխանատու քարտուղարին և կազմակերպության անդամներին սույն կանոնադրության և օրենսդրության շրջանակներում, կատարման համար կարող է փոխանցել կազմակերպության նախագահին վերապահված առանձին լիազորություններ,

6.9.11. որոշում է ընդունում կազմակերպության համար գույքի ձեռքբերման, տիրապետման, օգտագործման և տնօրինման վերաբերյալ, անկախ գույքի տեսակից ու չափից:

6.9.12. հաստատում է կազմակերպության հիմնական միջոցառումների և աշխատանքների տարեկան պլանները և ծրագրերը և ապահովում դրանց կատարումը,

6.9.13. սահմանում է կազմակերպության անդամների հաշվառում վարելու կարգը և պայմանները, ինչպես նաև կազմակերպության անդամների նկատմամբ խրախուսանքի և տույժի միջոցներ կիրառելու կարգը,

6.9.14. իրականացնում է կազմակերպության վեհաժողովի և/կամ խորհրդի կողմից իր վրա դրված այլ լիազորություններ:

Եթե ավարտվել է նախագահի պաշտոնավարման համար Օրենքով կամ սույն կանոնադրությամբ կամ վեհաժողովի որոշմամբ սահմանված պաշտոնավարման ժամկետը, ապա մինչև նոր նախագահի ընտրությունը նա շարունակում է կատարել կազմակերպության նախագահի պարտակությունները և իրականացնել նախագահի լիազորությունները որպես նախագահի ժամանակավոր պաշտոնակատար:

6.10. Կազմակերպության փոխնախագահը.

6.10.1. կատարում է կազմակերպության նախագահի կողմից իր վրա դրված առանձին լիազորությունները,

6.10.2. կազմակերպության նախագահի հանձնարարությամբ նրա բացակայության ժամանակ կատարում է կազմակերպության նախագահի պարտականությունները:

6.11. Կազմակերպության պատասխանատու քարտուղարը.

6.11.1. արձանագրում է կազմակերպության վեհաժողովի և/կամ խորհրդի նիստերը: Արձանագրությունը կարող է իրականացվել տեխնիկական միջոցների, սարքավորումների կիրառմամբ:

6.11.2. ստորագրում է կազմակերպության վեհաժողովի և խորհրդի նիստերի արձանագրությունները,

6.11.3. կատարում է կազմակերպության նախագահի կողմից իր վրա դրված առանձին լիազորություններ:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ և ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Կազմակերպության գույքը կազմակերպության սեփականությունն է:

7.2. Կազմակերպությանը սեփականության իրավունքով կարող է պատկանել ՀՀ օրենսդրությամբ չարգելված սեփականության իրավունքի ցանկացած օբյեկտ: Կազմակերպությանը պատկանող գույքը օգտագործվում է իր կանոնադրական

նպատակների ու խնդիրների իրականացման համար: Կազմակերպության անդամը նրա սեփականության նկատմամբ բաժնի իրավունք չունի:

7.3. Կազմակերպության նյութական և դրամական միջոցները գոյանում են մուտքավճարներից, անդամավճարներից, տնտեսական ընկերությունների, տեղական, օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների, անհատ քաղաքացիների կողմից ստացվող դրամաշնորհներից և նվիրատվություններից, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

8. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել ու լուծարվել վեհաժողովի կամ դատարանի որոշմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով:

8.2. Լուծարման մասին որոշում կայացնելու դեպքում ՀՀ արդարադատության նախարարության համաձայնությամբ վեհաժողովը կազմավորում է լուծարման հանձնաժողով և սահմանում լուծարման կարգը և ժամկետները:

8.3. Կազմակերպության լուծարման դեպքում լուծարման հանձնաժողովը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտատերերի պահանջները բավարարելուց և պարտադիր վճարումներն իրականացնելուց հետո մնացած գույքը, լուծարման մասին որոշում կայացրած մարմնի կողմից սահմանված կարգով, օգտագործում է կազմակերպության կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման նպատակով, դրա անհնարինության դեպքում այն փոխանցվում է պետական բյուջե, իսկ վեճի առկայության դեպքում հարցը լուծվում է դատարանի կողմից:

Սույն կանոնադրությունը կազմված է 16.11.16թ.